Կազմված է «27» 11 2025 թ.
Բաղկացած է 18 թերթից

Տպագրված է 2 օրինակ

ՍՏԵՂԾՎԱԾ Է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Տնօրենների խորհրդի
29.05.2019թ. N 208 որոշմամբ

Հավելված
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«27» 11 2025 թ.
N 119 հրամանի

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«27» 11 2025 թ
N 119 հրամանով

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն

Ա. Հակոբյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրությամբ)
«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի

ԵՐԵՎԱՆ 2025

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող, համապատասխան լիցենզիաների հիման վրա նախադպրոցական կրթական ծրագիր, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր հանրակրթական ծրագրեր, այդ թվում՝ այլընտրանքային (հեղինակային, փորձարարական), լրացուցիչ, արտադպրոցային և խորացված կրթական (ուսումնական) ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատություն հանդիսացող կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

2. Հիմնարկի կրթական գործունեության լիցենզավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, Հիմնարկի կրթական գործունեության պետական հավատարմագրումը կատարվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համապատասխան:

3. **Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ Հիմնարկը հայերենով իրականացնում է կրթական գործունեություն՝**

1) նախադպրոցական կրթական ծրագրով,

2) տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ:

4. Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և համապատասխան դաշնային հիմնական հանրակրթական ծրագրերով Հիմնարկը ռուսերենով իրականացնում է կրթական գործունեություն տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ

5. Հիմնարկը ստեղծվել է միակ հիմնադիր (սեփականատեր) հանդիսացող՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Հիմնադիր) Տնօրենների Խորհրդի 2019 թվականի մայիսի 29-ի N 208 որոշմամբ՝ սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն) նախատեսված նախադպրոցական կրթական և հանրակրթական ծրագրեր, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնելու նպատակով:

6. Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի գործունեության իրականացման պայմանների մասին» 2024 թվականի դեկտեմբերի 20-ին ստորագրված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր), «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, «Կրթության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Հիմնադրի ներքին իրավական ակտերով, այլ կազմակերպակարգադրական փաստաթղթերով և Կանոնադրությամբ:

7. Հիմնարկի գույքի սեփականատերը հանդիսանում է Հիմնադիրը: Հիմնարկն իր գործունեության իրականացման համար ունի Հիմնադրի կողմից իրեն հանձնված (ամրացված) անհրաժեշտ գույք, կլոր կնիք, ձևաթուղթ, տարբերանշան (լոգոտիպ), ընթացիկ բանկային հաշիվներ և անկախ մնացորդ, ինքնուրույն հաշվեկշիռ: Հիմնարկն իր գործունեության նպատակներին, Հիմնադրի հանձնարարություններին և իրեն ամրացված գույքի նշանակությանը համապատասխան, տիրապետում, օգտագործում ու տնօրինում է այդ գույքը: Հիմնարկը Հիմնադրի անունից ձեռք է բերում և իրականացնում գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրում է պարտականություններ, դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր և պատասխանող.

8. Հիմնարկը ենթակա է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական հաշվառման:

9. Հիմնարկն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են Հիմնարկի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները, հաշվետվությունները, հայտարարությունները, նորությունները և այլ անհրաժեշտ տեղեկատվություն·

10. Հիմնարկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ, ինչպես նաև միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա՝ համապատասխան օրենսդրական պահանջների պահպանմամբ ու չափորոշիչների հիման վրա իրականացնել այդ պայմանագրերով սահմանված հանրակրթական ծրագրեր, այդ թվում՝ օտար լեզվով:

11. Հիմնարկում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն, ինչպես նաև քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը: Կրոնական գործունեությունը և քարոզչությունն արգելվում են՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

12. Հիմնարկն, իր կողմից իրականացվող կրթական ծրագրերին համապատասխան, բաժանվում է մսուր մանկապարտեզի (այսուհետ՝ Մանկապարտեզ) և հանրակրթական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց): Հիմնարկի կազմում գործում է նաև սպորտային համալիր՝ բաղկացած մարզաառողջարարական կենտրոնից և փակ սահադաշտից, որոնք առաջնահերթ կերպով ծառայում են որպես Մանկապարտեզի և Դպրոցի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածք:

13. Հիմնարկը ստեղծվել է առանց ժամկետի սահմանափակման:

14. **Հիմնադրի անվանումն է՝**

1) հայերեն լրիվ՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն,

2) հայերեն կրճատ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ,

3) ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество «Газпром Армения»,

4) ռուսերեն կրճատ՝ ЗАО «Газпром Армения»,

5) անգլերեն լրիվ՝ «Gazprom Armenia» Closed Joint-Stock Company,

6) անգլերեն կրճատ՝ «Gazprom Armenia» CJSC,

15. Հիմնադրի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 43:

16. **Հիմնարկի անվանումն է՝**

1) հայերեն լրիվ՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ,

2) հայերեն կրճատ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ,

3) ռուսերեն լրիվ՝ Учреждение «Учебно-спортивный комплекс» закрытого акционерного общества «Газпром Армения»,

4) ռուսերեն կրճատ՝ Учреждение «Учебно-спортивный комплекс» ЗАО «Газпром Армения»,

5) անգլերեն լրիվ՝ «Educational-sport complex» enterprise of closed joint-stock company «Gazprom Armenia»,

6) անգլերեն կրճատ՝ «Educational-sport complex» enterprise of «Gazprom Armenia» CJSC:

17. Հիմնարկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Ավան վարչական շրջան, Ծարավ Աղբյուրի փողոց 55/25.

II. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Հիմնարկի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

19. Հիմնարկի՝

- առաքելությունն է՝ ազատ, ներդաշնակ, զարգացող, ստեղծագործ և մտածող անձի ձևավորումը,
- տեսլականն է՝ Հայաստանի մասնավոր հանրակրթական ուսումնական հաստատությունների շուկայում ձեռք բերված առաջատար դիրքերի պահպանում՝ առաջարկելով որակյալ, բազմակողմանի կրթություն, որը հիմնված է հեղինակային կրթական ծրագրի, յուրահատուկ ենթակառուցվածքի և ձեռք բերված փորձի համադրության վրա:

20. Հիմնարկի գործունեության առարկան Մանկապարտեզի յուրաքանչյուր սանի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի, ինչպես նաև Դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացի կազմակերպումն է՝ Կանոնադրությամբ նշված համապատասխան կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

21. Հիմնարկը ստեղծվել է կրթության գործունեության ոլորտում ծառայություններ մատուցելու նպատակով՝ ապահովելով առողջ ու անվտանգ միջավայրի ստեղծումը և անհատի կրթական կարիքների բավարարման համար անհրաժեշտ պայմաններն, ինչը հնարավորություն կտա երեխաներին ձեռք բերելու մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգացմանը նպաստող գիտելիքներ և սոցիալական հմտություններ, այդ թվում՝ նպատակաուղղված նրանց (անհատի) ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, մտավոր, բարոյական և ֆիզիկական անհատական կարիքների բավարարմանը՝ Մանկապարտեզի յուրաքանչյուր սանի և Դպրոցի յուրաքանչյուր սովորողի համար, վերջիններիս տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան՝ նախադպրոցական կրթական և հանրակրթական ծրագրերի իրականացման միջոցով, սաների և սովորողների առողջության պաշտպանության և

ամրապնդման, կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և համապատասխանաբար նախադպրոցական կրթության պետական կրթական, Հայաստանի Հանրապետության պետական կրթական ու Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներով սահմանված լավագույն արդյունքների ստեղծումը:

Հիմնարկի կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

22. Հիմնարկն իրավունք ունի իրականացնելու իր գործունեության հիմնական նպատակից բացի, լրացուցիչ ընդհանուր կրթական ծրագրեր (լրացուցիչ ընդհանուր զարգացման ծրագրեր, լրացուցիչ նախամասնագիտական ծրագրեր) և մասնագիտական վերապատրաստման ծրագրեր:

23. Հիմնարկն իր գործունեությունն իրականացնելիս՝

1) համագործակցում է ընտանիքի հետ՝ ապահովելով Մանկապարտեզի սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի (սանի) մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձևավորումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը,

2) ապահովում է Դպրոցում սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, պայմաններ է ստեղծում ինքնակրթության, ինքնազարգացման և լրացուցիչ (նախասիրական, նախամասնագիտական) կրթության պահանջմունքների բավարարման համար,

3) Հիմնարկի սպորտային համալիրի (մարզաառողջարարական կենտրոնի և փակ սահադաշտի)՝ որպես առաջնահերթ կերպով Մանկապարտեզի և Դպրոցի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի միջոցով ապահովում է նաև տարբեր մարզաձևերից մրցումների, մարզական պարապմունքների և մարզամշակութային այլ միջոցառումների կազմակերպում:

24. Հիմնարկը պատասխանատու է յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովման, կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը խթանելու նպատակով ֆիզիկական միջավայրի մատչելիության և անհատական/խելամիտ հարմարեցումների ապահովման համար, պետական, ինչպես նաև միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա՝ համապատասխան օտարերկրյա կրթական չափորոշիչներին, նախակրթական և հանրակրթական, այդ թվում՝ այլընտրանքային (հեղինակային) ծրագրերին, երեխաների (սաների և սովորողների) տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության պահպանման համար:

25. Հիմնարկի կողմից իրականացվող կրթական ծրագրերը, ինչպես նաև այդ ծրագրերի ապահովման միջոցառումներն ու ծառայությունները որպես անբաժանելի մաս կարող են ներառել՝

1) ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները,

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները,

3) սովորողների համար հանրակրթական լրացուցիչ դասընթացների կազմակերպումը,

4) սովորողների առողջության պահպանմանը նպաստող միջոցառումները,

5) սաների և սովորողների սննդի կազմակերպումը, այդ թվում՝ համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներգրավմամբ՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը,

6) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը,

7) տարբեր մակարդակների, այդ թվում՝ միջազգային, սեմինարների, կոնֆերանսների, օլիմպիադաների, մրցույթների կազմակերպում,

8) սովորողների, նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների) և մանկավարժական կազմի հոգեբանական և մանկավարժական խորհրդատվություն,

9) սովորողների խոսքի թերապիայի օգնություն, երեխաների հսկողություն և խնամք, ազատ ժամանցային գործունեություն, արտադասարանային գործունեություն, կրթական թեմաներով խորհրդատվական գործունեություն,

10) օրենսդրությամբ նախատեսված և (կամ) չարգելված այլ միջոցառումների և ծառայություններ:

26. Հիմնարկը կարող է իրականացնել գործունեության հետևյալ տեսակները՝

1) նախադպրոցական կրթություն,

2) տարրական ընդհանուր կրթություն,

3) հիմնական ընդհանուր կրթություն,

4) միջնակարգ ընդհանուր կրթություն,

5) մարզառողջարարական ծառայություններ,

6) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում,

7) լրացուցիչ մարմնամարզական և սպորտային (այդ թվում՝ ֆիզիկական դաստիարակության և մանկապատանեկան սպորտի) ծրագրերի իրականացում,

8) ռեսուրս-կենտրոնների ստեղծում՝ մասնագետների վերապատրաստման խորհրդատվական դասընթացների, ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրերի իրականացում,

9) արտադպրոցական դաստիարակության (կրթության (ճամբարի)) կազմակերպում,

10) ուսումնական ծրագրերի, ուսուցողական նյութերի, գիտական, մեթոդական, տեղեկատու գրականության մշակում,

11) Հիմնադրի կողմից սահմանված այլ գործունեություն:

Հիմնարկը կրթական, ինչպես նաև այլ գործունեությունն իրականացնում է վճարովի հիմունքներով՝ կրթական և այլ ծառայությունների մատուցման պայմանագրերով՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց հաշվին:

27. Ուսումնառությունը Հիմնարկում իրականացվում է առկա ուսուցման ձևերով: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ուսումնառությունը կարող է իրականացվել նաև հեռավար եղանակով:

28. Հիմնարկն իր գործունեության կազմակերպման նպատակով; իր իրավասության սահմաններում ընդունում (հաստատում) է համապատասխան ներքին կանոնակարգեր և (կամ) իրավական ակտեր, որոնց ընդունումը վերապահված չէ Հիմնադրին:

29. Հիմնարկի պարտավորությունների համար օրենքով սահմանված կարգով պատասխանատու է Հիմնադիրը:

III. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

30. Մանկապարտեզում Հիմնարկն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների ու ձևերի ընտրությամբ:

31. Մանկապարտեզում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Լիազորված մարմին) կողմից երաշխավորված՝ նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) և ուսումնական նյութերին համապատասխան:

32. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է ծրագրային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և նպատակաուղղված են յուրաքանչյուր երեխայի (սանի) գիտելիքի, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

33. Մանկապարտեզում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի (Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ):

34. Երեխայի ընդունելությունը Մանկապարտեզ իրականացվում է ծնողի (երեխայի (սանի) օրինական ներկայացուցչի) դիմումի, Հիմնարկի ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա:

35. Մանկապարտեզի խմբերի առավելագույն խտությունը սահմանում է Լիազորված մարմինը:

36. Մանկապարտեզում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից և ավարտվում օգոստոսի 31-ին: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները,

շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրով:

37. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում:

Մանկապարտեզում կարող են ձևավորվել տարատարիք խմբեր:

38. Մանկապարտեզն ըստ տեսակի մսուր-մանկապարտեզ է՝ 2-6 տարեկանների ընդգրկմամբ:

39. Մանկապարտեզում աշխատանքային ռեժիմը, տարիքային խմբերի թիվը, երեխաների մնալու տևողությունը սահմանվում են Հիմնարկի տնօրենի հրամանով:

40. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

41. Մանկապարտեզի սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի կողմից, որը Հիմնարկի տնօրենության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ և համաճարակային միջոցառումների իրականացման, հիգիենիկ նորմատիվների պահպանման և սննդի որակի համար:

42. Մանկապարտեզի մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

IV. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

43. Մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան (սանը),

2) ծնողը (երեխայի (սանի) օրինական ներկայացուցիչը),

3) Հիմնարկի տնօրենը, Հիմնարկի տնօրենի տեղակալը, մանկապարտեզում դաստիարակչական աշխատանքների պատասխանատուն (մեթոդիստը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, ֆիզիկուլտուրայի հրահանգիչը, երաժշտության դաստիարակը, բուժաշխատողը և այլ մանկավարժական աշխատողներ:

44. Սանի և Մանկապարտեզի աշխատանքներում ներգրավված Հիմնարկի աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

45. Հիմնարկի և ծնողների (օրինական ներկայացուցիչների) փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

46. Մանկապարտեզի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները կարգավորվում են, այդ թվում՝ վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով,

Կանոնադրությամբ, ինչպես նաև Հիմնարկի և ծնողի (օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրով:

47. Սաների ընդունելության ժամանակ Հիմնարկի տնօրենը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել Կանոնադրությանը և այլ փաստաթղթերին, որոնք կանոնակարգում են Մանկապարտեզի գործունեությունը:

48. Որպես Մանկապարտեզի աշխատանքներում ներգրավված Հիմնարկի աշխատող, աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց ;որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում են լիազորված մարմնի սահմանած մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների անվանացանկին և պաշտոնների նկարագրին:

49. Մանկապարտեզի աշխատանքներում ներգրավված աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, Հիմնադրի և Հիմնարկի ներքին իրավական ակտերով, Կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

V. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

50. Հիմնարկն ըստ կրթական մակարդակների՝

1) Դպրոցում Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ հայերենով, իրականացնում է տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրեր՝ ռուսերենի պարտադիր դասավանդմամբ, և

2) Դպրոցում Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և համապատասխան հիմնական հանրակրթական ծրագրերով՝ ռուսերենով, իրականացնում է տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրեր՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ:

51. Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ Դպրոցում՝ որպես եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոց, միջնակարգ (լրիվ) կրթությունն իրականացվում է 12 տարի տևողությամբ, հետևյալ հաջորդական աստիճաններով՝

- տարրական դպրոց՝ 1-4-րդ դասարաններ,
- միջին դպրոց՝ 5-9-րդ դասարաններ,
- ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ:

52. Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ Դպրոցում՝ որպես եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոց, միջնակարգ (լրիվ) կրթությունն իրականացվում է 11 տարի տևողությամբ, հետևյալ հաջորդական աստիճաններով՝

- տարրական դպրոց՝ 1-4-րդ դասարաններ,
- միջին դպրոց՝ 5-9-րդ դասարաններ,
- ավագ դպրոց՝ 10-11-րդ դասարաններ:

53. Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով սովորելու համար Դպրոց են ընդունվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների, այլ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց երեխաները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հիմնադրի կողմից հաստատվող՝ Դպրոցի ընդունելության կարգին համապատասխան:

54. Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրեր սովորելու համար Հիմնարկի դպրոց են ընդունվում Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց երեխաները՝ Հիմնադրի կողմից հաստատվող՝ Դպրոցի ընդունելության կարգին համապատասխան:

55. Ըստ Դպրոց երեխաների ընդունելության արդյունքների՝ Հիմնադիրը յուրաքանչյուր տարի որոշում է զուգահեռ դասարանների քանակը՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված՝ կրթական գործունեություն իրականացնելու սանիտարական նորմերին համապատասխան:

56. Դպրոցի այն սովորողներին, որոնք ամբողջությամբ յուրացրել են հիմնական ընդհանուր կամ միջնակարգ ընդհանուր կրթության ծրագրերը՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և անցել են ամփոփիչ պետական ատեստավորումը, տրվում է կրթության մասին փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

57. Դպրոցի այն սովորողներին, որոնք չունեն ակադեմիական պարտք, ամբողջ ծավալով կատարել են ուսումնական պլանը կամ անհատական ուսումնական պլանը (հիմնական ընդհանուր կամ միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով ուսուցման յուրաքանչյուր տարվա ընթացքում ուսումնական պլանի բոլոր ուսումնական առարկաներից ունեն բավարարից ոչ ցածր տարեկան գնահատականներ), ինչպես նաև ունեն «ստուգված» արդյունք հիմնական ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացման շրջանակներում ռուսաց լեզվի ամփոփիչ հարցազրույց, հիմնական ընդհանուր կրթության ծրագրերի յուրացման շրջանակներում ամփոփիչ շարադրության (փոխադրության) համար և, Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հաջողությամբ անցել են հիմնական ընդհանուր կրթության կամ միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացումը եզրափակող պետական ամփոփիչ ատեստավորումը, տրվում են կրթության մասին փաստաթղթեր՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

58. Դպրոցի այն սովորողներին, որոնք չունեն ակադեմիական պարտք, ամբողջ ծավալով կատարել են ուսումնական պլանը կամ անհատական ուսումնական պլանը (միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով ուսուցման յուրաքանչյուր տարվա ընթացքում ուսումնական պլանի բոլոր ուսումնական առարկաներից ունեն բավարարից ոչ ցածր տարեկան գնահատականներ), ինչպես նաև ունեն «ստուգված» արդյունք միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացման շրջանակներում ամփոփիչ շարադրությունից (փոխադրությունից) և, Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական

կրթական չափորոշիչներին համապատասխան, հաջողությամբ անցել են միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացումը եզրափակող պետական ամփոփիչ ատեստավորումը և ուսումնական պլանին համապատասխան ուսումնասիրվող բոլոր ուսումնական առարկաներից ունեն ուսման առաջադիմության «գերազանց» ամփոփիչ գնահատականներ, կրթության մասին համապատասխան փաստաթղթի հետ միասին Հիմնարկը շնորհում է «Ուսման մեջ հատուկ հաջողությունների համար» մեդալ՝ տրվում են կրթության մասին փաստաթղթեր՝ Ռուսաստանի Դաշնության. օրենսդրությամբ նախատեսված կարգով:

59. Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան (ոչ ավարտական)) գնահատումը, դրա ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է Դպրոցը:

60. Ուսումնական պլանները կազմվում են Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին և Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:

VI. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

61. Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցներն են՝

1) սովորողը,
2) սովորողի ծնողը (օրինական ներկայացուցիչը),
3) ուսուցիչն ու մանկավարժական այլ աշխատողները,
4) վարչական աշխատողները:

62. Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոնադրությամբ, ինչպես նաև Հիմնարկի և սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրով:

63. Դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

64. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու համապատասխան կրթություն,
2) անվճար օգտվելու Հիմնարկի ուսումնանյութատեխնիկական բազայից,
3) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որոնցով խախտվում են սովորողի իրավունքները կամ ոտնձգություն է կատարվում նրա պատվի ու արժանապատվության նկատմամբ,
4) կրթական գործընթացի հետ կապված բոլոր հարցերով դիմել Հիմնարկի համապատասխան աշխատակիցներին,
5) մասնակցել ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին,
6) սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը,
7) ազատորեն փնտրելու և մատչելի կերպով ստանալու ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,

9) խրախուսվելու օրինակելի վարքի կամ բարձր առաջադիմության համար,

10) օգտվելու օրենքով և Դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ իրավունքներից:

65. Սովորողը պարտավոր է՝

1) չխախտել Հիմնարկի, այդ թվում՝ Դպրոցի ներքին կարգապահական կանոնները,

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների ու կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները,

3) մասնակցել ուսումնական պարապմունքներին, միջոցառումներին, ծրագրերին և ժամանակին ու պատշաճ մակարդակով կատարել իրեն տրված հանձնարարությունները և առաջադրանքները,

4) կատարել օրենքով ու Դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

66. Դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

67. Դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, Կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով, որոնց կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում սովորողների նկատմամբ կարող են օրենքով ու Կանոնադրությամբ սահմանված կարգով կիրառվել կարգապահական տույժեր:

68. Դպրոցում խրախուսանքի միջոցներ և ձևեր կիրառելու կարգը սահմանում է Հիմնարկի տնօրենը:

69. Մանկավարժական աշխատողի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, ներքին կարգապահական կանոններով և տվյալ աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

70. Սովորողի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու դեպքում, եթե դրա հետևանքով երեխայի առողջությանը պատճառվել է վնաս, այն անձինք, որոնց վրա դրված են այդ պարտականությունները, կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

VII. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

71. Հիմնարկի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Կանոնադրության համապատասխան:

72. Հիմնարկի կառավարումն իրականացնում է Հիմնադիրը, իսկ Հիմնարկի գործադիր մարմինն է Հիմնարկի տնօրենը.

73. Հիմնարկի կառուցվածքը սահմանում և դրա կառավարման լիազորություններն իրականացնում է Հիմնադիրը:

74. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Հիմնարկի ստեղծումը (հիմնադրումը), վերակազմակերպումը և գործունեության դադարեցումը (լուծարումը),

2) Հիմնարկի կանոնադրության, նոր խմբագրությամբ կանոնադրության, դրանում կատարվող լրացումների և փոփոխությունների կատարումը,

3) Հիմնարկի կառավարման համակարգի սահմանումը,

4) Հիմնարկի կառուցվածքի, դրա գործունեության հիմնական ուղղությունների, առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների, պաշտոնային ցուցակի, բյուջեի, աշխատողների վարձատրության չափի հաստատումը,

5) Հիմնարկին հանձնվող (ամրացվող) գույքի կազմի ու չափի հաստատումը (որոշումը), դրա տիրապետման, օգտագործման, տնօրինման կարգի սահմանումը, այդ կարգի, ինչպես նաև գույքի պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը,

6) Հիմնարկի շահույթի օգտագործման կարգի սահմանումը,

7) Հիմնարկի խորհրդակցական մարմինների (Հոգաբարձուների խորհուրդ և/կամ այլ) ստեղծումը, դրանց կազմի հաստատումը,

8) իր կողմից սահմանված դեպքերում համապատասխան գործարքների կնքման համար համաձայնություն տալը,

9) Հիմնարկի տնօրենի նշանակումը, նրա հետ աշխատանքային պայմանագրի կնքումը, նրան պաշտոնից ազատումը,

10) Հիմնարկի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի հաստատումը,

11) Հիմնարկի ընթացիկ գործունեության նկատմամբ վերահսկողությունը,

12) Հիմնարկի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Կանոնադրության պահանջներին հակասող որոշումները, հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները կասեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը,

13) Հիմնարկի գործունեության մասին հաշվետվությունների և ստուգման արդյունքների քննարկումն ու այդ կապակցությամբ համապատասխան որոշումների ընդունումը,

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

75. Կանոնադրությամբ նախատեսված գործունեության իրականացման համար Հիմնարկն իրավունք ունի՝

1) Կանոնադրությանը համապատասխան Հիմնադրի անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ,

2) Հիմնադրի անունից դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային), գործարքներ,

4) իրականացնելու իր կանոնադրական նպատակներից բխող՝ Կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև այլ իրավունքներ:

76. Հիմնարկը պարտավոր է՝

1) ապահովել Հիմնադրի կողմից իրեն հանձնված (ամրացված) գույքի պահպանությունը, տիրապետել, օգտագործել և տնօրինել այդ գույքը օրենքով սահմանված շրջանակներում՝ իր գործունեության նպատակներին, Հիմնադրի հանձնարարություններին և այդ գույքի նշանակությանը համապատասխան,

2) այլ անձանց հետ հարաբերություններում պատշաճ կերպով կատարել իր ստանձնած պայմանագրային պարտավորությունները,

3) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել իր գործունեության արդյունքների հաշվառում, ներկայացնել հաշվապահական, ֆինանսական, վիճակագրական և օրենքով սահմանված այլ հաշվետվություններ,

4) ապահովել Կանոնադրության, գույքի նկատմամբ իրավունքները հաստատող, ինչպես նաև հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, Հիմնադրի և իր ներքին իրավական ակտերի, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի պահպանությունը,

5) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հիմնադրին տրված լիցենզիայի պարտադիր պայմաններն ու պահանջները,

6) կատարել իր կանոնադրական նպատակներից բխող՝ Կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև այլ պարտականություններ:

77. Իր առջև դրված նպատակների արդյունավետ իրականացման համար Հիմնարկը՝

1) իր կողմից կնքված պայմանագրերի հիման վրա հաստատում է երկկողմ և բազմակողմ կապեր (հարաբերություններ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կրթական, մարզական և այլ կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ,

2) պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց:

78. Հիմնարկն իր գործունեության իրականացման նպատակով՝

1) կազմակերպում է իր ընթացիկ գործունեությունը,

2) նախապատրաստում և սահմանված կարգով կնքում է իր գործունեության հետ կապված պայմանագրեր,

3) կատարում է իր գործունեության հետ կապված հաշվարկներ և վճարումներ,

4) սահմանված կարգին համապատասխան՝ կազմակերպում է Մանկապարտեզի սաների և Դպրոցի սովորողների ընդունելություն,

5) Հիմնադրի հանձնարարությունների հիման վրա իրականացնում է իր գործունեությանն առնչվող այլ գործառույթներ:

79. Կանոնադրությամբ չնախատեսված առևտրային կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեությամբ Հիմնարկը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կարող է զբաղվել միայն Հիմնադրի հանձնարարությամբ կամ նրա համաձայնությամբ:

80. Հիմնարկը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հիմնադրին տրամադրված լիզենցիաների հիման վրա:

81. Հիմնարկի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Հիմնարկի տնօրենը, որին պաշտոնում նշանակում է Հիմնադիրը:

82. Հիմնարկի տնօրենը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կանոնադրությանը, Հիմնադրի իրավական ակտերին ու կազմակերպակարգադրական փաստաթղթերին համապատասխան և դրանցով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան, իր և Հիմնադրի միջև կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա:

83. Հիմնարկի տնօրենի տեղակալներն ու գլխավոր հաշվապահը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են Հիմնարկի տնօրենի կողմից՝ Հիմնադրի հետ նախնական համաձայնությամբ:

84. Հիմնարկի տնօրենը՝

1) իրականացնում է Հիմնարկի ընթացիկ կառավարումն ու ղեկավարումը և ապահովում է դրա բնականոն գործունեությունը,

2) տնօրինում է Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները), Հիմնադրի անունից կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային) և կատարում է գործարքներ,

3) Կանոնադրությամբ նախատեսված Հիմնարկի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ Հիմնադրին է ներկայացնում Հիմնարկի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ,

4) իր իրավասության սահմաններում, առանց լիազորագրի, հանդես է գալիս Հիմնադրի անունից, ինչպես նաև Հիմնադրի կողմից լիազորված լինելու դեպքում տալիս է Հիմնադրի անունից հանդես գալու լիազորագիր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,

5) օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակներում ներկայացնում է Հիմնարկը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների ու անձանց հետ հարաբերություններում,

6) բանկերում բացում է Հիմնարկի ընթացիկ հաշիվներ,

7) օրենքով, այլ իրավական ակտերով կամ Կանոնադրությամբ նախատեսված իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրություններ, տալիս է Հիմնարկի աշխատողների կողմից կատարման ենթակա ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր,

8) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

9) ապահովում է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան

ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը, սաների առողջության պահպանությունը,

10) օրենքով, այլ իրավական ակտերով և (կամ) Կանոնադրությամբ սահմանված կարգով կատարում է լիազորությունների բաշխում իր տեղակալների միջև,

11) կազմում է Հիմնարկի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, ապահովում է Հիմնարկի գործունեության ստուգման արդյունքներով տրված հանձնարարականների կատարումը,

12) աջակցում է Հիմնարկի խորհրդակցական մարմինների աշխատանքներին ու իր իրավասությունների շրջանակներում համակարգում է դրանք,

13) ապահովում է Հիմնարկի ռազմավարական զարգացման ծրագրի մշակումը,

14) ապահովում է Հիմնարկի բյուջեի նախագծի մշակումը և դրա կատարումը,

15) ապահովում է Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքի պահպանությունը,

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի կողմից ընդունված իրավական ակտերով և Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

85. Հիմնարկի տնօրենը պարտավոր է պատշաճ կերպով կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կանոնադրությամբ, իր և Հիմնադրի միջև կնքված աշխատանքային պայմանագրով նախատեսված պարտականությունները: Հիմնարկի տնօրենը պատասխանատվություն է կրում իր պարտականությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

86. Հիմնարկի տնօրենի բացակայության դեպքում, վերջինիս հրամանով, Հիմնադրի հետ համաձայնեցմամբ, նրա լիազորություններն իրականացնում է Հիմնարկի տնօրենի տեղակալներից մեկը:

87. Հիմնարկի տնօրենը, նրա տեղակալները, ինչպես նաև խորհրդակցական մարմինների անդամները Հիմնարկի անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Հիմնարկի

Հիմնարկի գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով կարող են ձևավորվել խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, շրջանավարտների միավորում, ամբիոններ (նույն առարկայի կամ հարակից առարկաների երեք և ավելի ուսուցիչների միավորումներ,) և այլն, որոնց ձևավորման ու գործունեության կարգը, բացառությամբ հոգաբարձուների խորհրդի, սահմանվում է Հիմնարկի տնօրենի հրամանով, իսկ Հիմնարկի հոգաբարձուների խորհրդի ձևավորման ու գործունեության կարգը սահմանում է Հիմնադիրը:

Մանկապարտեզի և Դպրոցի մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում, որի կազմում ընդգրկվում են Մանկապարտեզի և Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

VIII. ՀԻՄՆԱՐԿԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ (ԱՄՐԱՑՎԱԾ) ԳՈՒՅՔԸ

88. Հիմնարկի գույքը ձևավորվում է Հիմնարկի հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից Հիմնարկի տիրապետմանը, օգտագործմանն ու տնօրինմանը հանձնված (ամրացված) արժեքներից, ինչպես նաև Հիմնարկի գործունեության ընթացքում ստեղծված և (կամ) ձեռք բերված գույքից:

89. Հիմնարկի գույքը Հիմնադրի կողմից Հիմնարկին է հանձնվում (ամրացվում) հանձնման-ընդունման (հանձնման) ակտին համապատասխան և հաշվառվում է Հիմնարկի, ինչպես նաև Հիմնադրի հաշվեկշռում:

90. Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքը Հիմնադրի սեփականությունն է: Հիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնել Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքը:

91. Հիմնարկն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոնադրությամբ սահմանված կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն հանձնված (հատկացված) գույքը:

92. **Հիմնարկի գույքային իրավունքի օբյեկտներ կարող են լինել.**

1) գույքը (ներառյալ՝ դրամական միջոցները) և գույքային իրավունքները,
2) աշխատանքները, ծառայությունները և դրանց արդյունքները,
3) տեղեկատվությունը,
4) ոչ նյութական բարիքները.

93. Հիմնարկի գույքի ձեռքբերման գործառույթներն իրականացվում են Հիմնադրի հաշվին և վերջինիս կողմից սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:

94. Հիմնարկն իրավունք չունի առանց Հիմնադրի համաձայնության կնքելու Հիմնարկին հանձնված (ամրացված) հիմնական միջոցների օտարման կամ ծանրաբեռնման գործարքներ:

95. Հիմնարկի ֆինանսական միջոցները գոյանում են Հիմնադրի սահմանած կարգով:

96. **Հիմնարկի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝**

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները,
2) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
3) Հիմնարկի անձեռնմխելի ֆոնդի կառավարումից գոյացած միջոցները,
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և Հիմնարկի կանոնադրական նպատակներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

97. Հիմնարկի պահպանման ծախսերի չափը սահմանում է Հիմնադիրը:

Հիմնարկի գործունեության ֆինանսական ապահովումը կատարվում է Հիմնադրի և (կամ) «Գազպրոմ» ՀԲ ընկերության սեփական միջոցների ու Հիմնարկի կողմից Կանոնադրությանը համապատասխան՝ կրթության և այլ ծառայությունների մատուցման համար ստացված միջոցների հաշվին.

Հիմնադիրը և (կամ) «Գազպրոմ» ՀԲ ընկերությունը Հիմնարկի գործունեության ֆինանսական աջակցությունն իրականացնում են սեփական միջոցների հաշվին, մինչև Հիմնարկի ինքնածախսածածկման անցնելը: Հիմնարկի գործունեության ընթացում

Հիմնարկի ստացած բոլոր միջոցներն ուղղվում են բացառապես Հիմնարկի գործունեության և զարգացման նպատակներին:

IX. ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

98. Հիմնարկը կարող է վերակազմակերպվել օրենքի կամ Հիմնադրի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

99. Հիմնարկը կարող է լուծարվել (դրա գործունեությունը կարող է դադարել) Հիմնադրի որոշմամբ կամ օրենքով սահմանված այլ հիմքերով և կարգով: Հիմնարկը համարվում է լուծարված (դրա գործունեությունը համարվում է դադարած)՝ Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում այդ մասին գրառում կատարելու պահից:

100. Հիմնարկի լուծարման (դրա գործունեության դադարման) դեպքում Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքի տնօրինման կարգը սահմանվում է Հիմնարկի լուծարման (դրա գործունեության դադարման) մասին Հիմնադրի որոշմամբ:

101. Հիմնարկի լուծարման (դրա գործունեության դադարման) դեպքում նրա իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են Հիմնադիրին: